ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/39

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Հոֆման» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Դիլբանդյանի (պետական գրանցման համար՝ 273.110.1163155),

«Հոֆման» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Մարտիրոսյանի (լիազորագիր՝ տրված 20.05.2022թ.),

«Պրոգրես լայն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Վ. Էլոյանի և Ա. Հարությունյանի (լիազորագրեր՝ տրված 20.05.2022թ.),

քննելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար «ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին իրականցվող հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից 13.04.2022թ. ներկայացված (16.05.2022թ. վարույթ ընդունված) բողոքը և «Պրոգերս լայն» ՍՊԸ-ի կողմից 16.05.2022թ. ներկայացված համանման բողոքը (16.05.2022թ. վարույթ ընդունված) (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/39 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Հոֆման» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 13.05.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից սույն թվականի ապրիլի 12-ին հրատապ բաց մրցույթ գնման ձևով հայտարարվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ» ծածկագրով ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին իրականցվող հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգով (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժիններին մասով մասնակցության հայտ է ներկայացրել «ՀՈՖՄԱՆ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ 00495298, էլ հասցե՝ armen.martirosyan84@gmail.com, հեռ.----------):

Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել սույն թվականի ապրիլի 27-ին ժամը 15:00-ին: Պատվիրատուի կողմից 2022թ. մայիսի 2-ին գնումների պաշտոնական gnumner.am կայքում հրապարակվել է Ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը, որի 5-րդ կետից հայտնի է դառնում որ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշել է, քանի որ ««ՀՈՖՄԱՆ» ՍՊ ընկերության հայտում առկա է հրավերով սահմանված հայտի ապահովումը, սակայն մասնակիցը ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում, այն է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 17:00-ն ուղեկցող գրությամբ հայտի ապահովման բնօրինակը չի ներկայացրել, որպիսի պայմաններում մասնակցի հայտը ենթակա է մերժման, հիմք ընդունելով կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները, այնք է ՝ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար է մերժվում է, եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը:

Միաժամանակ հանձնաժողովը արձանագրում է, որ «ՀՈՖՄԱՆ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա էլեկտրոնային թվային ստորագրությունը վավեր չէ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ անկախ վերոնշյալ խախտման

արդյունքում մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկելու /շտկում չներկայացնելու/ հանգամանքից, մասնակցի հայտը ենթակա է մերժման, ուստի հանձնաժողովի կողմից վերջինիցս շտկում պահանջելը դառնում է առարկայազուրկ:

Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովը ղեկավարվելով վերոնշյալ իրավական և փաստական հիմքերով, որոշեց՝ «ՀՈՖՄԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ամբողջությամբ գնահատել անբավարար և մերժել»:

Հաշվի առնելով վերոնշյալ արձանագրումները հայտնում ենք, որ Հանձնաժողովի կողմից կայացրած որոշումները չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն «Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով»:

Կարգի 32-րդ կետի 19-րդ կետի համաձայն « եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում»:

Կարգի 40-րդ կետի 4-րդ կետի համաձայն հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ Կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը, իսկ 41-րդ կետի համաձայն «Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները»:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ընդ որում կարգի 41-րդ կետը ուղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար՝ այն էլ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալ փաստական և իրավական հանքամանքները՝ հայտնում ենք, որ հանձնաժողովը իրավունք չուներ մերժելու մասնակցի կողմից ներկայացված

հայտը այն հիմնավորմամբ, որ ինչպես արձանագրվել է հանձնաժողովի կողմից մասնակցի կողմից գնումների էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով ներկայացված հայտի փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորագրությունը, որը հաստատվել է լիազորված անձի միջոցով, վավեր չի եղել: Միաժամանակ փաստում ենք, որ հայտով ներկայացրած լիազորագիրը, որով լիազորված անձին տրված է եղել իրավունք հաստատելու փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հաստատված է եղել միայն մասնակցի տնօրենի կողմից և համակարգ է ներբեռնվել սկանավորված տարբերակով, որը հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային թվային ստորագրութմաբ որպես հայտի փաստաթուղթ հաստատված չի եղել նաև հայտի ապահովման պատճենը: Այսինքն նման պայմաններում հայտը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատած Արմեն Մարտիրոսյանը չի ունեցել որևէ իրավունք հայտը ստորագրելու համար, այսինքն Մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում չի ստանձնել որևէ պարտավորություն, որի առկայության պայմաններում է միայն հնարավոր փաստել վերջինիս կողմից պարտավորության խախտմամբ կատարված լինելու կամ չկատարելու հանգամանքի առկայության մասին, իսկ հայտի ապահովումը և լիազորագիրը ենթակա են շտկման:

Հայտի ապահովման բնօրինակը գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ այն հիմնավորմամբ, որ Պատվիրատուն պետք է առաջնորդվեր վերոնշյալ իրավական կարգավորումներով և Մասնակցին էլեկտրոնային եղանակով ծանուցեր՝ մեկ աշխատանքնային օրվա ընթացքում շտկելու նշված անհամապատասխանությունները, որի հետ միասին մասնակցի կողմից Պատվիրատուին կներկայացվեր նաև հայտի ապահովման բնօրինակը: Նշված պայմաններում Պատվիրատուն չի ապահովել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը և Մասնակցի հայտը անհիմն կերպով մերժել է:

Ելենով վերոգրյալից՝ խնդրում ենք Ձեզ, պարտավորեցնել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովին վերացնել 2022թ. մայիսի 2-ին գնումների պաշտանական gnumner.am կայքում հրապարակված Հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ հաստատված 29.04.2022թ. որոշումը՝ «Հոֆման» ՍՊ ընկերության հայտը մերժելու վերաբերյալ, ինչպես նաև չեղարկել 2022թ. մայիսի 6-ին հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը»:

Ի լրումն բողոքի Ընկերությունը հայտնել է հետևյալը՝

«Ի լրումն 2022թ. մայիսի 13-ին «ՀՈՖՄԱՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Մասնակից) կողմից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերյալ ներկայացված բողոքի՝ հայտնում ենք հետևյալը.

Ըստ Ընթացակարգի հրավերի

8.9 կետի, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով ստուգել մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը: Սույն պարբերության կիրառման դեպքում կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը պետք է առնվազն պարունակի տվյալներ մասնակցի (մասնակիցների) անվանման, հարկ վճարողի հաշվառման համարի և հայտը ներկայացվելու ամիս ամսաթվի և տարեթվի մասին: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

8.10 Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և

մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Եթե հայտի գնահատման արդյունքում անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա այն համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

8.12 Հայտերը բացվելուց և գնահատվելուց հետո կազմվում է արձանագրություն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.13 Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն հրավերի 1-ին մասի 3.5 կետում նշված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ.

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում: Հանձնաժողովի այն անդամները, որոնք հանձնաժողովի աշխատանքների մասնակցում են հայտերի բացման և գնահատման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխոնությունը շտկելու անթույլատրելիություն՝ հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քատրուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչը չի իրականացվել Պատվիրատուի կողմից: Հանձնաժողովը իրավունք չուներ մերժելու մասնակցի կողմից ներկայացված հայտը նաև այն հիմնավորմամբ, որ ինչպես արձանագրվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցի ներկայացված հայտի փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորագրությունը, որը հաստատվել է լիազորված անձի միջոցով, վավեր չի եղել: Միաժամանակ փաստում ենք, որ հայտով ներկայացրած լիազորագիրը, որով լիազորված անձին տրված է եղել իրավունք հաստատելու փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հաստատված է եղել միայն մասնակցի տնօրենի կողմից և համակարգ է ներբեռնվել արտատպված (սկանավորված) տարբերակով, որը հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային թվային ստորագրությամբ որպես հայտի փաստաթուղթ հաստատված չի եղել նաև հայտի ապահովման պատճենը: Նման պայմաններում հայտը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատած Արմեն Մարտիրոսյանը չի ունեցել որևէ իրավունք՝ հայտը ստորագրելու և ներկայացնելու համար, ***այսինքն Մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում չի ստանձնել որևէ պարտավորություն, որի առկայության պայմաններում է միայն հնարավոր փաստել վերջինիս կողմից պարտավորության խախտմամբ կատարված լինելու կամ չկատարելու հանգամանքի առկայության մասին***, իսկ հայտի ապահովումը և լիազորագիրը ենթակա են շտկման:

Միաժամանակ հայտնում ենք, որ Մասնակցի կողմից հայտը գնումների էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով ներկայացրել է 2022թ. ապրիլի 26-ին ժամը 16:24-ին (կցվում է համակարգից արտատպված հայտի ներկայացման ժամկետը), իսկ հայտերի բացումը տեղի է ունեցել 2022թ. ապրիլի 27-ին ժամը 15:00-ին: Հատկանշական է այն հանգամանքը, որ Ընթացակարգի հայտերի բնացման և գնահատման նիստը, որի վերաբերյալ կազմված արձանագրությունը գնումների պաշտոնական gnumner.am կայքում

հրապարակվել է 2022թ. մայիսի 2-ին ժամը 18:19-ին, տեղի է ունեցել 2022թ. ապրիլի 27-ին ժամը 15:00-ին, որում արձանագրվել է, որ Մասնակիցը մինչև հաջորդ օր՝ այսինքն 2022թ. ապրիլի 28-ին ժամը 17:00-ին, Պատվիրատուին չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը, այսինքը Պատվիրատուն հայտի ապահովման բնօրինակը ներկայացնելուց մեկ օր առաջ արձանագրել է դրա չներկայացնելու հանգամանքը և նույն արձանագրությամբ ֆիքսել, որ հանձնաժողովը նման որոշումը կայացրել է 2022թ. ապրիլի 29-ին: Այսինքն հանձնաժողովը ապրիլի 27-ին հրավիրված նիստում որոշում է կայացրել ապրիլի 28-ին կատարվելիք գործողությունների լինել չլինելու վերաբերյալ:

Ելնելով վերոնշյալից՝ ևս մեկ անգամ արձանագրում ենք, որ հայտի ապահովման պատճենը, որը Մասնակցի կողմից ներկայացվել է Պատվիրատուին համակարգի միջոցով, չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրության և Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին և ենթակա է շտկման: Այսինքն Պատվիրատուի կողմից իրականացված մեկնաբանության համաձայն, եթե համակարգում որևէ մասնակցի կողմից հայտի ապահովման տեղը կցված լիներ ցանկացած այլ փոստաթուղթ, որի վրա գրված կլիներ հայտի ապահովում և գումարի չափը, համարվելու էր ընդունելի և Պատվիրատուն սպասելու էր մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրա ժամը 17:00-ն, որպեսզի մասնակցի կողմից ներկայացվեր նշված փաստաթղթի բնօրինակը, այլ ոչ թե մասնակցին տալու էր մեկ աշխատանքային օր ժամկետ՝ շտկելու անհամապատասխանությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալ փաստական և իրավական հանգամանքները՝ ևս մեկ անգամ խնդրում ենք Ձեզ, պարտավորեցնել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովին՝ վերացնել 2022թ. մայիսի 2-ին գնումների պաշտանական gnumner.am կայքում հրապարակված Հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ հաստատված 29.04.2022թ. որոշումը՝ «Հոֆման» ՍՊ ընկերության հայտը մերժելու վերաբերյալ, ինչպես նաև չեղարկել 2022թ. մայիսի 6-ին հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.05.2022թ. ժամը 16:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենն ապահովել է իր և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2.«Պրոգրես լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Պորգրես լայն» ՍՊԸ-ն 16.05.2022թ. ներկայացված համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին իրականցվող հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների մատուցման նպատակով ս.թ. ապրիլի 12-ին կազմակերպել է ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ ծածկագրով բաց մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթին մասնակցել է նաև մեր կազմակերպությունը՝ «Պրոգրես լայն» ՍՊԸ-ն: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով սահմանում է, որ «Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում»:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի դ. պարբերության համաձայն «Մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանար գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը»: Տվյալ դեպքում մեր կողմից ներկայացվել է արժեք, ԱԱՀ և ընդհանուր գին դաշտերում համապատասխանաբար 62158056,13, 12431611,23 և 74589667,35 արժեքները: Եթե արժեք դաշտի համար հաշվում ենք 20% ԱԱՀ, ապա թիվը ստացվում է 12431611,226 և քանի որ ՀՀ արժույթի ամենափոքր միավորը լուման է թիվը կլորացվել է վերոգրյալ կետի պահպանմամբ 12431611,23:

Օրենքի 3-րդ կետը.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ 1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին պարտավորեցնել անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2022 թվականի ապրիլի 27-ին արձանագրություն N 2-ով «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի հայտը 4-րդ չափաբաժնի մասով անբավարար գնահատելու և մերժելու որոշումը, ինչպես նաև մայիսի 5-ով արձանագրություն N 3-ի 4.1 կետի 2-րդ մասով 4-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչելու «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ-ին, պայմանագիր կնքելու որոշումը 4-րդ չափարաժնի մասով և հաղթող ճանաչել «Պրոգրես լայն» ՍՊԸ-ին»:

«Պրոգրես լայն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.05.2022թ. ժամը 16:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

<u>3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 19.05.2022թ. թիվ ԱԵ//12775-2022 գրությամբ ներկայացված բողոքների վերաբերյալ հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջներին համապատասխան, կից Ձեզ ենք ներկայացնում սահմանված փաստաթղթերի պատճենները, միաժամանակ հայտնելով հետևյալը.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 12.04.2022թ.-ին հայտարարվել է ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին իրականցվող հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների ձեռք բերման «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ), որը խմբավորված է 10 չափաբաժիններում:

Մրցույթի բացումը տեղի է ունեցել 27.04.2022թ.-ին:

«Հոֆման» ՍՊԸ-ն «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի կողմից 25.04.2022թ.-ին տրամադրված թիվ 1835/10/5 բանկային երաշխիքի (այսուհետ նաև՝ Երաշխիք) բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը: Սակայն Բանկը՝ երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից չի ուղարկել գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (Հրավերի թիվ 3 հավելված):

Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետև նաև՝ Հանձնաժողով) 27.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով սահմանված հայտի ապահովումը, սակայն մասնակիցը ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 31-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում, այն է՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ հայտի ապահովման բնօրինակը չի ներկայացրել, որպիսի պայմաններում մասնակցի հայտը մերժվել է, հիմք ընդունելով վերոնշյալ կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները, այն է՝ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Միաժամանակ, Հանձնաժողովը արձանագրել է, որ «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա էլեկտրոնային թվային ստորագրությունը վավեր չէր, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անկախ վերոնշյալ խախտման արդյունքում մասնացի կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկելու /շտկում չներկայացնելու/ հանգամանքից, մասնկցի հայտը ենթակա էր մերժման, ուստի Հանձնաժողովի կողմից վերջինիցս շտկում պահանջել դառնում է առարկայազուրկ:

Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովը ղեկավարվելով վերոնշյալ իրավական և փաստական հիմքերով, որոշել է «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ամբողջությամբ գնահատել անբավարար և մերժել ու հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետը, որոշել է մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ուղարկել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Հոֆման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը ուսումնասիրելու համար:

Պատվիրատուն գտնում է, որ «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային

համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հրավերի 4.3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավական նորմերից ելնելով, կարելի է փաստել, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Սույն դեպքում, կարելի է արձանագրել, որ ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշումը բխում է Օրենքի 34-րդ հոդվածով և Կարգի 42-րդ կետով սահմանված դրույթների պահանջներից, քանի որ Մրցույթի հրավերով սահմանվել է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի հայտի ապահովում, իսկ բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովումը ներկայացնելու դեպքում, այն ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ: Այսինքն Կարգի 42-րդ կետը իմպերատիվ սահմանել է դրույթ այն մասին, թե որ դեպքում է մերժման ենթակա մասնակցի հայտը: Այլապես *«ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը»* նշված նախադասությունը կընդգրկվեր ոչ թե Կարգի 42-րդ կետում, այլ Կարգի 41-րդ կետում և այդ պարագայում կարելի էր արձանագրել, որ պետք է մասնակցին տրվի շտկման հնարավորություն:

Ուստի, նման պայմաններում, գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը, «Հոֆման» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելով, գործել է իրավաչափ, քանի որ վերջինիս կողմից թույլ է տրվել Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ և Հրավերի 4.3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դրույթների խախտում:

Միաժամանակ անդրադառնալով «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված մեկ այլ հանգամանքին, այն է՝ մասնակցի հայտում տեղ գտած էլեկտրոնային ստորագրության ոչ վավեր լինելուն, ապա հայտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը վերջինիս այս մասով շտկելու հնարավորություն չտալով նույնպես գործել է իրավաչափ, քանի որ, ինչպես նշվել է թիվ 2 արձանագրությամբ, անկախ վերոնշյալ խախտման արդյունքում մասնացի կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկելու /շտկում չներկայացնելու/ հանգամանքից, մասնկցի հայտը ենթակա էր մերժման: Այսինքն, եթե նույնիսկ գնահատող հանձնաժողովը վերջինիս անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն ընձեռներ և մասնակիցը շտկեր էլեկտրոնային ոչ վավեր ստորագրությունը՝ վավերով, միևնույն է մասնակցի հայտը մերժվելու էր գնահատող հանձնաժողովի կողմից՝ Կարգի 42-րդ և 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված իմպերատիվ պահանջների համապատասխան:

Ցանկանում ենք նաև տեղեկացնել, որ վերը նշված իրավական և փաստական հիմքերի ու հանգամանքների վերաբերյալ առկա է նաև Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումները՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/27 և ԳԲՔԱ-ԼՕ-2021/61:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բողոքը ստանալուց հետո կրկին ուսումնասիրել է «Հոֆման» ՍՊԸ-ի էլեկտրոնային ստորագրության վավերությունը, որի վերաբերյալ կներկայացնի լրացուցիչ դիրքորոշում:

Անդրադառնալով «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայված բողոքին, գտնում ենք, որ այն նույնպես ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Պրոգրես լայն» ՍՊԸ-ն «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս, թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը 4-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է հետևյալ ձևով.

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
4	ՀՀ Գեղարքունիքի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքներ	62158056,13 (վաթսուներկու միլիոն հարյուր հիսունութ հազար հիսունվեց ամբողջ տասներեք հարյուրերորդական)	12431611, 23 (տասներկու միլիոն չորս հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր տասնմեկ ամբողջ քսաներեք հարյուրերորդական)	74589667, 35 (յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր վաթսունյոթ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական)

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 27.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի /հավելված 2/ չափաբաժին 4-ում առկա է անհամապատասխանություն, այն է՝ ընդհանուր գին սյունակում ներկայացված տառերով և թվերով նշված գումարների հանրագումարը չի համապատասխանում արժեքի (ինքնարժեքի և կանխատեվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հանրագումարին՝ պետք է լիներ 74589667. 36 (յոթանասունչոսր միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր վաթսունյոթ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական), սակայն գրված է 74589667. 35 (յոթանասունչոսր միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր վաթսունյոթ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական):

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ

ենթակետով՝ Հանձնաժողովը որոշել է 4-րդ չափաբաժնի մասով «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք

է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Տվյալ դեպքում կարելի է արձանագրել, որ «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում և մրցույթի հրավերի օրինակելի ձևում նշված է, որ 5=3+4, այսինքն «Արժեք» սյունակում նշված գումարին եթե գումարում ենք «ԱԱՀ» սյունակում նշված գումարը, ապա ստացվում է ոչ թե «ընդհանուր գին» սյունակում նշված 74589667,35 ՀՀ դրամ գումարը, այլ ստացվում է 74589667,36 (62158056,13+12431611,23):

Համաձայն ենք բողոքաբերի բողոքում նշված այն դիտարկմանը, որ 62158056,13 * 20%=12431611,226, ինչպես նաև համաձայն ենք, որ ԱԱՀ-ի գումարը, կլորացվել է դեպի վերև և ստացվել է 12431611,23 թիվը, սակայն հենց այդ կլորացման արդյունքում վերջնական՝ ընդհանուր գին սյունակում ստացվել է սխալ գումար, որպիսի պայմաններում մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը 4-րդ չափաբաժնի մասով չի համապատասխանում վերոնշյալ իրավական նորմերի պահանջներին, հետևաբար պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող ընդհանուր գինը նույնպես սխալ է հաշվարկվել:

Այսպիսով, գնահատող հանձնաժողովի կողմից «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն իրավաչափ է և բխում է Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի դրույթներից:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ «Հոֆման» ՍՊ և «Պրոգրես լայն» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված բողոքը և համանման բողոքն ամբողջությամբ անհիմն են և ենթակա են մերժման»:

Ի լրումն վերը նշված գրության՝ 26.05.2022թ. թիվ ԱԵ//13346-2022 գրությամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը՝

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին իրականցվող հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից բողոքը ստանալուց հետո կրկին ուսումնասիրել է «Հոֆման» ՍՊԸ-ի էլեկտրոնային ստորագրության վավերությունը, միաժամանակ հարցում է կատարվել «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին (այսուհետև նաև՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ), խնդրելով տրամադրել տեղեկատվություն: Կից ներկայացվում է հարցման պատասխանը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.05.2022թ. ժամը 16:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2022/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2022/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար «ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին իրականցվող հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Հոֆման» և «Պրոգրես լայն» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

«Հոֆման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով սահմանված հայտի ապահովումը, սակայն մասնակիցը ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 31-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում, այն է՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ հայտի ապահովման բնօրինակը չի ներկայացրել, որպիսի պայմաններում մասնակցի հայտը մերժվել է, հիմք ընդունելով վերոնշյալ կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները, այն է՝ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Միաժամանակ, Հանձնաժողովը արձանագրում է, որ «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա էլեկտրոնային թվային ստորագրությունը վավեր չէր, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անկախ վերոնշյալ խախտման արդյունքում մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկելու /շտկում չներկայացնելու/ հանգամանքից, մասնակցի հայտը ենթակա էր մերժման, ուստի Հանձնաժողովի կողմից վերջինիցս շտկում պահանջելը դառնում է առարկայազուրկ:

Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովը ղեկավարվելով վերոնշյալ իրավական և փաստական հիմքերով, որոշեց՝ «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ամբողջությամբ գնահատել անբավարար և մերժել...» :

3. «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, 4-րդ չափաբաժնի մասով ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 2
«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ» *ծածկագրով*
բաց մրցույթի հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «Պրոգրես լայն» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4

	4	ՀՀ Գեղարքունիքի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքներ	62158056,13 (վաթսուներկու միլիոն հարյուր հիսունութ հազար հիսունվեց ամբողջ տասներեք հարյուրերորդական)	12431611, 23 (տասներկու միլիոն չորս հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր տասնմեկ ամբողջ քսաներեք հարյուրերորդական)	74589667, 35 (յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր վաթսունյոթ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական)	

4. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողով արձանագրել է անհամապատասխանություն «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի (հավելված 2) 4-րդ չափաբաժնում, այն է՝ ընդհանուր գին սյունակում ներկայացված տառերով և թվերով նշված գումարների հանրագումարը չի համապատասխանում արժեքի (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հանրագումարին՝ պետք է լիներ 74589667.36 (յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր վաթսունյոթ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական), սակայն գրված է 74589667. 35 (յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր վաթսունյոթ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում է կայացրել 4-րդ չափաբաժնի մասով «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Հոֆման» ՍՊԸ-ի 13.05.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի համանման բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 19.05.2022թ. թիվ ԱԵ//12775-2022 և 26.05.2022թ. թիվ ԱԵ//13346-2022 գրությունները՝ կից փաստաթղթերով և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում***, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ ***դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:***

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում

են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում փվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը***, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 4.3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Ընթացակարգի հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության

ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար «ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին իրականցվող հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Հոֆման» և «Պրոգրես լայն» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

«Հոֆման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով սահմանված հայտի ապահովումը, սակայն մասնակիցը ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 31-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում, այն է՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ հայտի ապահովման բնօրինակը չի ներկայացրել, որպիսի պայմաններում մասնակցի հայտը մերժվել է, հիմք ընդունելով վերոնշյալ կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները, այն է՝ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին

մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Միաժամանակ, Հանձնաժողովը արձանագրում է, որ «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա էլեկտրոնային թվային ստորագրությունը վավեր չէր, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անկախ վերոնշյալ խախտման արդյունքում մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկելու /շտկում չներկայացնելու/ հանգամանքից, մասնակցի հայտը ենթակա էր մերժման, ուստի Հանձնաժողովի կողմից վերջինիցս շտկում պահանջելը դառնում է առարկայազուրկ:

Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովը ղեկավարվելով վերոնշյալ իրավական և փաստական հիմքերով, որոշեց՝ «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ամբողջությամբ գնահատել անբավարար և մերժել...» :

Այսպիսով՝ «Հոֆման» ՍՊԸ-ն բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Հայտի ապահովման բնօրինակը գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ այն հիմնավորմամբ, որ Պատվիրատուն պետք է առաջնորդվեր վերոնշյալ իրավական կարգավորումներով և Մասնակցին էլեկտրոնային եղանակով ծանուցեր՝ մեկ աշխատանքնային օրվա ընթացքում շտկելու նշված անհամապատասխանությունները, որի հետ միասին մասնակցի կողմից Պատվիրատուին կներկայացվեր նաև հայտի ապահովման բնօրինակը: Նշված պայմաններում Պատվիրատուն չի ապահովել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը և Մասնակցի հայտը անհիմն կերպով մերժել է»:

Վերոգրյալի մասով՝ Պատվիրատուն մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովը, «Հոֆման» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելով, գործել է իրավաչափ, քանի որ վերջինիս կողմից թույլ է տրվել Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ և Հրավերի 4.3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դրույթների խախտում:

Միաժամանակ անդրադառնալով «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված մեկ այլ հանգամանքին, այն է՝ մասնակցի հայտում տեղ գտած էլեկտրոնային ստորագրության ոչ վավեր լինելուն, ապա հայտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը վերջինիս այս մասով շտկելու հնարավորություն չտալով նույնպես գործել է իրավաչափ, քանի որ, ինչպես նշվել է թիվ 2 արձանագրությամբ, անկախ վերոնշյալ խախտման

արդյունքում մասնացի կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկելու /շտկում չներկայացնելու/ հանգամանքից, մասնկցի հայտը ենթակա էր մերժման: Այսինքն, եթե նույնիսկ գնահատող հանձնաժողովը վերջինիս անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն ընձեռներ և մասնակիցը շտկեր էլեկտրոնային ոչ վավեր ստորագրությունը՝ վավերով, միևնույն է մասնակցի հայտը մերժվելու էր գնահատող հանձնաժողովի կողմից՝ Կարգի 42-րդ և 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված իմպերատիվ պահանջների համապատասխան»:

Եվ այսպես, ամփոփելով կողմերի բերված փաստարկները և դրանք համադրելով կիրառման ենթակա իրավական կարգավորումների հետ՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ ***դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում փվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը***, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջը, մերժելով «Հոֆման» ՍՊԸ-ի հայտը՝ Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում հայտի ապահովման բնօրինակը չներկայացնելու հիմքով պայմանվորված գործել է իրավաչափ:

Ինչ վերաբերում է «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված այն դիտարկմանն, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված հայտի ապահովման էլեկտրոնային ստորագրության վավեր չլինելու հանգամանքով պայմանավորված, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է Ընկերությանն այս մասով շտկելու հնարավորություն տար, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ բողոքի քննության շրջանակներում Պատվիրատուն 26.05.2022թ. թիվ ԱԵ/13346-2022 գրությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել «Էլեկտրոնային կառավարման և ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի (հետայսու՝ նաև «ԷԿԵՆԳ» ՓԲԸ) կողմից Պատվիրատուի գրությանն ի պատասխան ներկայացված գրությունը, համաձայն որի՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն հայտնել է, որ «Հոֆման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթուղթը պարունակում է վավեր էլեկտրոնային ստորագրություն:

Այսպիսով՝ վերը նշված փաստերով պայմանավորված, գտնում եմ, որ «Հոֆման» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Անդրադառնալով «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքին՝ արձանագրում եմ հետևյալը.

«Պրոգրես լայն» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, 4-րդ չափաբաժնի մասով ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 2
«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ» *ծածկագրով*
բաց մրցույթի հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «Պրոգրես լայն» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	2	3	4	5=3+4
4	ՀՀ Գեղարքունիքի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքներ	62158056,13 (վաթսուներկու միլիոն հարյուր հիսունութ հազար հիսունվեց ամբողջ տասներեք հարյուրերորդական)	12431611, 23 (տասներկու միլիոն չորս հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր տասնմեկ ամբողջ քսաներեք հարյուրերորդական)	74589667, 35 (յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր վաթսունյոթ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական)

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.05.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություն «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի (հավելված 2) 4-րդ չափաբաժնում, այն է՝ ընդհանուր գին սյունակում ներկայացված տառերով և թվերով նշված գումարների հանրագումարը չի համապատասխանում արժեքի (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հանրագումարին՝ պետք է լիներ 74589667.36 (յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր վաթսունյոթ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական), սակայն գրված է 74589667. 35 (յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր վաթսունյոթ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում է կայացրել 4-րդ չափաբաժնի մասով «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպես, Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է, որ հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում է յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ***:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում

առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.1-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացումը կկատարվի համակարգի միջոցով՝ սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված «7»րդ օրվա ժամը «15:00 »-ին:

Հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, ***հիմք ընդունելով տառերով գրվածը:***

Նույն կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում՝ հայտերի բացման և ***գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին***

<u>անհամապատասխան,</u> բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ գնային առաջարկի մեջ «ընդհանուր գինը» 5-րդ սյունակում նշված գումարը հաշվարկվում է 5=3+4 (ընդհանուր գինը=արժեք+ԱԱՀ) բանաձևով, մինչդեռ՝ «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի կողմից հայտով 4-րդ չափաբաժնի համար ներկայացված Հավելված N 2-ի՝ գնային առաջարկի ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում արձանագրել, որ «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմված է սխալ, այն է՝ «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում «Արժեք» սյունակում նշված գումարը և «ԱԱՀ» սյունակում նշված գումարն իրար գումարելիս ստացվում է ոչ թե «ընդհանուր գին» սյունակում նշված 74589667,35 ՀՀ դրամ գումարը, այլ ստացվում է 74589667,36 ՀՀ դրամ (62158056,13+12431611,23), որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, գործել է իրավաչափ, հետևաբար գտնում եմ, որ բողոքը ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է բողոքաբեր այն դիտարկմանն, որ «Պրոգրես լայն» ՍՊԸ-ն, հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի դ) պարբերությամբ սահմանված պահանջը «ԱԱՀ»-ի գումարը կլորացրել է դեպի վերև, սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ վերջինիս հայտի մերժման հիմք է հանդիսացել, ոչ թե «ԱԱՀ»-ի գումարի կլորացումը, այլ այն փաստը, որ ընդհանուր գինը սյունակում ստացվել է սխալ գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Հոֆման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի համանման բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**